ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» 12. 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ԱՑ-ԳԲԽ-15/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2015թ. թիվ 73-1/777787-15 գրությամբ ներկայացված «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03528823) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.02.2015թ. թիվ 73-1/777787-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա-

կիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 24.02.2015թ. թիվ 13-01/255 գրության պատճենը:

2. «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 09.03.2015թ. թիվ 09/032-411 գրությամբ դիմել է «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

Կենտրոնում 06.07.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-15/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/64» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից է ճանաչվել «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն: Ընթացակարգի արդյունքում 27.12.2014թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ապրանքն ամբողջությամբ պետք էր մատակարարել 30 օրացուցային օրում: Ընկերության երկու բարձրակարգ մասնագետներ հարազատների հետ տեղի ունեցած դժբախտության պատճառով թողել են աշխատանքը և մեկնել են քաղաք Գյումրի և բացակայել են աշխատանքից 25 օր:

Արդյունքում, Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետում (12.02.2015թ.) չեն կատարվել:

Ընկերության տնօրենը նիստով ներկայացրել է Պատվիրատուին ուղղված 03.02.2015թ. գրությունը, որով խնդրել է հաշվի առնել վերը նշված պատճառահետևանքները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» այդ պահին

գործող կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 68-րդ կետը՝ ապրանքի մատուցման համար նախատեսված ժամկետը երկարաձգել:

3. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 09.03.2015թ. թիվ 04/032-413 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու):

Պատվիրատուն 17.03.2015թ. թիվ 13-01/373 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. կնքվել է կահույքի ձեռքբերման թիվ Բ186/14 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր): Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է 31 աշխատանքային օր, սակայն Ընկերությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը որևէ գործողություն չի ձեռնարկել պայմանագրային պարտավորությունների կատարման համար:

Պատվիրատուն նշել է, որ ելնելով վերոնշյալ հանգամանքից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.2, 3.1.4 կետերը և 3.1.4.1 կետի «բ» ենթակետը, 2015թ. փետրվարի 20-ին միակողմանի լուծել է պայմանագիրը և այդ մասին 24.02.2015թ. թիվ 13-01/256 գրությամբ ծանուցել է Ընկերությանը:

Կենտրոնում 06.07.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-15/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չի կատարել, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է:

Կենտրոնը 03.11.2015թ. թիվ 01/04.1/3119-15 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով սեղմ ժամկետում տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով

տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի և տուգանքի գումարներն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով վերոհիշյալ գումարների չափը:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությանը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 10.11.2015թ. թիվ 13-01/1660 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն 20.02.2015թ. որոշմամբ գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/-64» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչված «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի հետ 24.12.2014թ. կնքված թիվ Բ186/14 պայմանագիրը միակողմանի լուծել է, քանի որ վերջինս չկատարելով պայմանագրային պարտավորությունները՝ խախտել է Պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետը:

Համաձայն Ընթացակարգի հրավերի, որպես պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագիր, համաձայն որի Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին պետք է վճարի 430000 ՀՀ դրամ՝ գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու համար:

Պատվիրատուն նույն գրությամբ հայտնել է, որ նշված գումարն առ այսօր Ընկերության կողմից չի վերականգնվել:

4. ՍՑ-ԳԲԽ-15/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2015թ. թիվ 73-1/777787-155 գրությամբ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԵՑ-ՇՀԱՊՁԲ-14/64» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից է ճանաչվել «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի արդյունքում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. կնքվել է գրասենյակային կահույքի ձեռքբերման թիվ Բ186/14 պայմանագիրը:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսվել է ձեռք բերել սեղան՝ 55 հատ (3-րդ չափաբաժին), գրապահարան՝ 40 հատ (5-րդ չափաբաժին) և զգեստապարան՝ 25 հատ (6-րդ չափաբաժին) ապրանքատեսակները:

4. Նույն տեխնիկական բնութագրով վերը նշված ապրանքների մատակարարման համար սահմանվել է ժամկետի սկիզբը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, ավարտը՝ 31 աշխատանքային օր:

5. Պայմանագրին կից թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված՝ «գրասենյակային և կենցաղային կահույք» ապրանքատեսակը պետք է մատակարարվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 31 աշխատանքային օրում՝ 2015թ. 1-ին եռամսյակի ընթացքում (որի հաշվարկը սկսվում է 01.01.2015թ. մինչև 12.02.2015թ.):

6. Ընկերությունը 03.02.2015թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ հայտնելով, որ Պայմանագիրը ստորագրել և ստացել է 12.01.2015թ.: Պայմանագրի համաձայն՝ ապրանքն ամբողջությամբ պետք էր մատակարարել 30 օրացուցային օրում, սակայն Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետում (մինչև 12.02.2015թ.) չեն կատարվել, քանի որ Ընկերության երկու բարձրակարգ մասնագետներ օբյեկտիվ պատճառներով բացակայել են աշխատանքից 25 օր: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պայմանագրով ստանձնած պարտավորությունների համար սահմանված ժամկետը երկարաձգել ևս 25 օրացուցային օրով:

7. Պատվիրատուն 24.02.2015թ. թիվ 13-01/256 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի միջև 27.12.2014թ. կնքված թիվ Բ186/14 պայմանագրով սահմանված ժամկետը լրացել

է, սակայն Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել, հետևաբար, հիմք ընդունելով Պայմանագրի 2.2, 3.1.4 կետերը և 3.1.4.1 կետի «բ» ենթակետը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 2015թ. փետրվարի 20-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը:

8. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 10.11.2015թ. թիվ 13-01/1660 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության կողմից որպես պայմանագրի կատարման ապահովում տուժանքի մասին համաձայնագրով սահմանված 430000 ՀՀ դրամ գումարն առ այսօր Ընկերության կողմից չի վերականգնվել:

5. ՍՑ-ԳԲԽ-15/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2015թ. թիվ 73-1/777787-15 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 24.02.2015թ. թիվ 13-01/256, 17.03.2015թ. թիվ 13-01/373 և 10.11.2015թ. թիվ 13-01/1660 գրությունները, «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի 03.02.2015թ. գրությունը, Պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» այդ պահին գործող կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կամ նրա կողմից ստացողին հանձնել նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված 55 հատ սեղան, 40 հատ գրապահարան, 25 հատ զգեստապահարան (այսուհետ՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ Ապրանքը մատակարարվում է նույն պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է 31 աշխատանքային օր, որի հաշվարկը

կատարվում է նույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ միակողմանի լուծել նույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.4.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված 3-րդ (սեղան՝ 55 հատ), 5-րդ (գրապահարան՝ 40 հատ) և 6-րդ (զգեստապահարան՝ 25 հատ) չափաբաժիններով նախատեսված ապրանքները չմատակարարելով՝ Պայմանագրի շրջանակներում **ավելի քան մեկ անգամ** թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների խախտումը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով տուժանքը մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրվելն Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2015թ. թիվ 73-1/777787-15 գրությամբ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը (ՀՎՀՀ 03528823) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-15/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան